

Հաստատված է
«ԲԼԵՄՍ» ունիվերսալ վարկային
կազմակերպություն» ՍՊԸ
հիմնադիր ժողովի որոշմամբ
արձանագրություն թիվ 1
« 19 » փետրվարի 2007թ.

Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում
«17» ապրիլի 2007թ.
Գրանցման համար 18 _____

Հաստատված է՝
«ԲԼԵՄՍ» ունիվերսալ վարկային
կազմակերպություն» ՍՊԸ
մասնակիցների հերթական տարեկան
ընդհանուր ժողովի որոշմամբ
արձանագրություն թիվ 4
25» «ապրիլի» 2010թ

Գրանցված է՝
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում
«10» «հունիսի» 2010թ
Գրանցման համար 18 _____
Փոփոխություն թիվ 1

Հաստատված է՝
«ԲԼԵՄՍ» ունիվերսալ վարկային
կազմակերպություն» ՍՊԸ
մասնակիցների հերթական տարեկան
ընդհանուր ժողովի որոշմամբ
արձանագրություն թիվ 5 _____
«14» «մայիսի» 2011թ

Գրանցված է՝
Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում
«07» «հուլիսի» 2011թ.
Գրանցման համար 18 _____
Փոփոխություն թիվ 2

«ԲԼԵՄՍ»

ունիվերսալ վարկային կազմակերպություն
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(նոր խմբագրությամբ)



ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) ստեղծվել է համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության: Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն և անգլերեն գրառումներով), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու ֆիրմային այլ վավերապայմաններ:

1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (հետագայում՝ Օրենք, կամ օրենսդրություն) և սույն Կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորում են օրենսդրությամբ և սույն Կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
հայերեն լրիվ՝
«ԲԼԵՍՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

կրճատ՝

«ԲԼԵՍՍ» ՈՒՎԿ ՍՊԸ

անգլերեն լրիվ՝

“BLESS” Universal Credit Organization Limited Liability Company

կրճատ՝

“BLESS” UCO LLC

1.9. Ընկերության գտնվելու վայրը և գործունեության հասցեն է՝ ՀՀ, քաղաք Երևան, 0010, Տպագրիչների փողոց շենք 9, թիվ 70:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության գործունեության նպատակը ֆինանսատնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

2.2. Ընկերությունը համապատասխան լիցենզիայի հիման վրա կարող է իրականացնել «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված հետևյալ գործառնությունները՝

ա) իրավաբանական անձանցից, իր մասնակիցներից, Հայաստանի Հանրապետությունից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից ներգրավել փոխառություններ և կնքել նմանատիպ գործարքներ,

բ) տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

զ) տրամադրել երաշխիքներ,
դ) մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշ-
վարկային ծառայություններ (ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով
սահմանված մասով),

ե) մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել
այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառա-
վարում,

զ) պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործու-
նեություն,

է) անկանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և
արտարժույթի ֆյուչերսներ և նման այլ գործարքներ,

էա) կանխիկ ձևով գնել և վաճառել արտարժույթ՝ միայն այն դեպքերում, երբ
արտարժույթի առուվաճառքն անհրաժեշտ է Ընկերության կողմից տրամադրված վարկերի
մարումները սպասարկելու համար և մարման համար անհրաժեշտ չափով,

(2.2. կետի էա ենթակետը ավելաց. 07.07.2011թ)

ը) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

թ) մատուցել ֆինանսական խորհրդատվություն,

ժ) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական հա-
մակարգ,

ժա) իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել ապահովագրական գործակալի գործունեու-
թյուն՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահ-
մանված կարգով, ինչպես նաև մատուցել ներդրումային ծառայություններ առանց ներդրու-
մային ծառայությունների մատուցման լիցենզիայի՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի
դրույթներին համապատասխան:

(2.3. կետը փոփոխ. 10.06.2010թ)

ՀՀ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Ընկերությունը կարող է իրականացնել
վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված
այլ գործառնություններ:

2.4. Ընկերությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն
անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր գործունեությունն իրականացնելու համար:

2.5. Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և օրենքով
վարկային կազմակերպություններին չթույլատրվող այլ գործունեություն:

2.6. Ընկերությունը ինքն է որոշում իր կողմից տրամադրվող ծառայությունների
սակագները:

2.7. Ընկերության և հաճախորդի միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենքով
և կողմերի միջև կնքված պայմանագրով, այդ թվում՝ հրապարակային պայմանագրերով:

2.8. Ընկերությունը չի կարող փոխառություններ ներգրավել հրապարակային օֆեր-
տաների միջոցով:

**Գ Լ ՈՒ Խ 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ,
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1. Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի
կարգավիճակ:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավո-
րությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմա-
նագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ,
կրել պարտավորություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և
օտարերկրյա բանկերում՝ հաշիվներ (ՀՀ դրամով, արտարժույթով):

3.2. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մաս-
նաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ
այլ պետությունների տարածքում:

Կառավարչական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:

3.3. Ընկերությունն իրավունք ունի.

3.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.3.2. ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

3.3.3. օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լիցել գրավառու և գրավատու,

3.3.4. օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.4. Ընկերությունը պարտավոր է.

3.4.1. ՀՀ օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել հաշվետվություններ,

3.4.2. պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցված վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,

3.4.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ հրապարակել իր գործունեության վերաբերյալ,

3.4.4. ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,

3.4.5. կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

Գ Լ ՈՒ Խ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Ընկերության մասնակիցներ են համարվում այն անձինք, ովքեր նշված են սույն կանոնադրության 6.2 կետում: Մասնակիցները կարող են փոխվել Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու դեպքում:

4.2. Ընկերությունը՝ որպես մեկ հիմնադիր (մասնակից) չի կարող հիմնադրել կամ ունենալ այլ տնտեսական ընկերություն, որը բաղկացած է մեկ անձից:

4.3. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

4.3.1. Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը,

4.3.2. տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, Ընկերության տնտեսական գործունեության այլ փաստա-

թղթերի հետ,

4.3.3. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (շահութաբաժնի) մաս,

4.3.4. հանդես գալ առաջարկություններով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում,

4.3.5. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող լրիվ վճարված բաժնեմասերի ձայների չափով,

4.3.6. Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ շահույթի իր մասը,

4.3.7. Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,

4.3.8. հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

4.3.9. Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,

4.3.10. օգտվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

4.4. Ընկերության մասնակիցները ունեն իրենց սեփականությունը հանդիսացող բաժնեմասերը (դրանց մասը) օտարելու կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, այլ անձանց փոխանցելու իրավունք: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք: Մասնակիցների կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց: Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, եռամսյա ժամկետում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց իրացնել կամ որոշում ընդունել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին: Մասնակիցների նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է 15 օր: Մասնակիցների նախապատվության իրավունքի իրականացման ժամկետը չի կիրառվում այն դեպքում, երբ իրենց բաժնեմասերը կամ դրանց մի մասը օտարելու ցանկություն են հայտնել Ընկերության բոլոր մասնակիցները միաժամանակ: Ընկերության բաժնեմասերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի է առնվում Ընկերության զուտ ակտիվների մեծությունը: Այդ դեպքում կողմերից որևէ մեկի պահանջով պետք է բաժնեմասերի արժեքը (կամ Ընկերության զուտ ակտիվների մեծությունը) սահմանվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

4.5. Անձը և վերջինիս հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Ընկերության կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերել բաժնեմասերի 10 (տաս) տոկոսից ավելին միայն ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

4.6. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

4.6.1. սույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ,

4.6.2. չիրապարակել գաղտնի տեղեկություններ Ընկերության գործունեության վերաբերյալ,

4.6.3. կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,

4.6.4. պահպանել սույն կանոնադրության դրույթները:

4.7. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10 (տաս) տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում է կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:

Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերության տրամադրության տակ:

Ընկերությունը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը Օրենքով և սույն կանոնադրության 4.8 կետով սահմանված կարգով:

4.8. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկա-

յացնելու պահից փոխանցվում է Ընկերությանը:

Ընկերությունից դուրս եկող մասնակցի հետ հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

4.8.1. վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարման մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը,

4.8.2. բաժնեմասի կամ գույքի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,

4.8.3. մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ,

4.8.4. մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը:

Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը Ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում:

4.9. Սույն կանոնադրությամբ կամ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ հաստատված կարգով սահմանված ժամկետում ներդրումներ չկատարող մասնակիցը պարտավոր է ուշացման համար վճարել չմոծված գումարի 10%-ի չափով տուգանք (ավանդներ ներդնելու պարտականությունը խախտելու համար):

4.10. Այն մասնակիցը, որը սույն կանոնադրությամբ կամ օրենսդրությամբ սահմանված իր պարտականությունները չի կատարում կամ ոչ պատշաճ ձևով է կատարում, կամ իր գործողություններով խոչընդոտում է Ընկերության նպատակներին հասնելուն, կարող է հեռացվել Ընկերությունից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՊԻՏԱԼԸ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

5.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

5.1.1. այն գույքի, որը մասնակիցները ներդրել են որպես ավանդ կամ այլ պայմանավորվածությամբ նրան են հանձնել,

5.1.2. տնտեսական գործունեության հետևանքով ձեռք բերած գույքի,

5.1.3. ստացված եկամուտների,

5.1.4. գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերված գույքի:

5.2. Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

5.3. Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են օրենսդրությամբ:

5.4. Ընկերության կանոնադրական կապիտալը համարվում է բացառապես փողով՝ Հայաստանի Հանրապետության դրամով:

5.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը ստեղծում է այլ պարտադիր պահուստներ:

5.6. Սահմանված կարգով առաջացող զուտ շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

6.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 200 000 000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ, որը բաղկացած է 2 000 000 (երկու միլիոն) ՀՀ դրամ անվանական արժեքով 100 (հարյուր) բաժնեմասից:

6.2. Ընկերության բոլոր բաժնեմասերը լրիվ վճարված են և տեղաբաշխված են

Ընկերության մասնակիցների միջև համաձայն հավելվածի:

6.3. Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից:

6.4. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.5. Ընկերությունը կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխել կանոնադրական կապիտալի մեծությունը:

6.6. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա՝ ամբողջությամբ վճարումից հետո:

6.7. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել՝

ա) Ընկերության գույքի (չբաշխված շահույթի) հաշվին,

բ) Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին:

6.8. Ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունում է Ընկերության ընդհանուր ժողովը՝ Ընկերության մասնակիցների ձայների առնվազն երկու երրորդով, որով որոշվում է լրացուցիչ ներդրումների չափը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները:

6.9. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.10. Ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:

6.11. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է իրականացվել Ընկերության բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:

6.12. Ընկերությունը իրավունք չունի նվազեցնել իր կանոնադրական կապիտալը, եթե արդյունքում դրա չափը կպակասի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից:

6.13. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումն Ընկերության բոլոր մասնակիցների միայն բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու ճանապարհով պետք է իրականացվի Ընկերության բոլոր մասնակիցների բաժնեմասերի պահպանմամբ:

6.14. Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազեցումը:

6.15. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

6.16. Ընկերության կանոնադրական կապիտալում Ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

ԳԼՈՒԽ 7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝

1) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը,

2) Ընկերության խորհուրդը,

3) Ընկերության վարչությունը և գլխավոր տնօրենը:

7.2. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք: Ընդհանուր ժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

7.3. Ընկերության բոլոր մասնակիցներն իրավունք ունեն ներկա գտնվելու Ընդհանուր ժողովին, մասնակցել օրակարգի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս:

7.4. Ընկերության յուրաքանչյուր մասնակից Ընդհանուր ժողովում ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

7.5. Ընկերության մասնակիցներն իրավասու են մասնակցել Ընդհանուր ժողովին ան-

ձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Ընկերության մասնակիցների ներկայացուցիչները պետք է ներկայացնեն իրենց լիազորությունները հաստատող փաստաթղթեր:

7.6. Ընկերության ընդհանուր ժողովը ընտրում է իր նախագահին:

7.7. **Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝**

1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ դրանց մասնակցելու հարցերը,

2) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

3) Ընկերության վերակազմակերպումը,

4) Ընկերության լուծարումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը, լուծարային հաշվեկշռի հատուցումը,

5) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը,

6) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը,

7) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,

8) Ընկերության խորհրդի ձևավորումը, խորհրդի անդամների ընտրությունն ու նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը. Ընկերության խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը, խորհրդի կանոնակարգի հաստատումը,

9) Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը. Ընկերության գործադիր մարմինների անդամների վարձատրության չափի սահմանումը, գործադիր մարմնի կանոնակարգի հաստատումը,

10) Ընկերության արտաքին աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,

11) Ընկերության խորհրդի կողմից համաձայնեցված՝ Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը),,

12) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը,

13) Ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը,

14) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը,

15) «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում՝ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարքներ, որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի 50 տոկոսից ավելին),

16) Օրենքով նախատեսված այլ հարցերի լուծումը:

7.8. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության Խորհրդի կամ գործադիր մարմինների որոշմանը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

7.9. Ընկերության ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող հարցերի լուծումը կատարվում է Ընդհանուր ժողովի նիստում կամ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով): Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է Օրենքով սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների կեսից ավելին: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) Ընդհանուր ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայացման դեպքում:

Սույն կանոնադրության 7.7 կետի 3 և 4 ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների կողմից միաձայն:

Սույն կանոնադրության 7.7 կետի 2 և 5 ենթակետերում նշված հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի առնվազն երկու երրորդ մեծամասնությամբ:

Մյուս հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ձայների թվի պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով տվյալ հարցի վերաբերյալ որոշում

ընդունելու համար ավելի մեծ թիվ նախատեսված չէ:

Խորհրդակցական ձայնի իրավունքով Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն` Ընկերության խորհրդի և գործադիր մարմինների անդամները, աուդիտն իրականացնող անձը և ներքին աուդիտորը:

Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է արձանագրության վարումը: Արձանագրությունների գիրքը ցանկացած ժամանակ պետք է ներկայացվի մասնակիցներին: Նրանց պահանջով արձանագրությունների գրքից տրվում են գործադիր մարմնի կողմից հաստատված քաղվածքներ:

7.10. Հերթական ընդհանուր ժողովները գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Հերթական Ընդհանուր ժողովները գումարվում են հերթական ֆինանսական տարվա ավարտից 2 ամիս հետո` 4 ամսվա ընթացքում: Արտահերթ նիստեր գումարվում են Ընկերության վարչության կողմից` սույն Կանոնադրությունում նշված հանգամանքների առկայության դեպքում, ինչպես նաև այն բոլոր դեպքերում, եթե դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը: Ընդհանուր ժողովները հրավիրում և անց են կացվում Օրենքով և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից սահմանված կարգով:

7.11. Ընկերության խորհրդի իրավասություններն են`

1) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը, նրանց կանոնադրությունների հաստատումը,

2) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,

3) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,

4) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,

5) Ընկերության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքային կանոնակարգերի, աշխատանքային ծրագրերի հաստատումը, դրանց վերաբերյալ հաշվետվություններ ընդունումը,

6) Ընդհանուր ժողովի կողմից հաստատված փաստաթղթերով նախատեսված դեպքերում Ընկերության գործառնությունների կատարման ընթացակարգերի, հրահանգների, մեթոդական ցուցումների, ուղեցույցերի և ներքին իրավական այլ ակտերի հաստատումը,

7) Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների (տոկոսադրույքներ, ծառայության վճարներ և այլ պայմանների), ռիսկերի սահմանաչափերի սահմանումը,

8) Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում Ընկերության կողմից իրականացվող ակտիվային ու պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ որոշումների ընդունումը,

9) Փողերի լվացման և սահբեկչության ֆինանսավորման կանխարգելման ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր գործառնությունների իրականացումը,

10) Ընկերության աշխատատեղերի հաստատումը,

11) Ընկերության ներքին աուդիտորի նշանակումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների սահմանումը,

12) Ընկերության վարչության անդամների և ներքին աուդիտորի նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ որոշումների ընդունումը,

13) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,

14) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,

15) Ընկերության տարածքային ստորաբաժանումների ղեկավարների նշանակումը,

16) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության` հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,

17) «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերում` գործարքների կնքման մասին որոշման ընդունումը (խոշոր գործարքներ, որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի 20-50 տոկոսը):

7.12. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ սույն կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

7.13. Ընկերության խորհուրդը բաղկացած է խորհրդի նախագահից և երկու անդամից:

7.14. Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

7.15. Ընկերության խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձ:

7.16. Ընկերության խորհրդի ձևավորման և գործունեության, նիստերի գումարման և անցկացման կարգը, խորհրդի իրավասությունները, նրա անդամների լիազորությունների դադարեցման կարգը, խորհրդի նախագահի իրավասությունները սահմանվում է սույն կանոնադրությամբ և Ընկերության խորհրդի կանոնակարգով:

7.17. Ընկերության խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ:

Ընկերության խորհրդի նիստերը գումարում է Ընկերության խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Ընկերության գլխավոր տնօրենի (վարչության), ներքին աուդիտորի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, ՀՀ Կենտրոնական բանկի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնեմասերի 5 (հինգ) կամ ավելի տոկոս ունեցող մասնակցի (մասնակիցների) գրավոր պահանջով:

7.18. Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն: Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Ընկերության հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Ընկերության խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Ընկերության խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

7.19. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով:

Քվեաթերթիկը պետք է բովանդակի՝

ա) Ընկերության ֆիրմային անվանումը,

բ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,

գ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ»,

դ) լրացված քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,

ե) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի Խորհրդի անդամի կողմից,

զ) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

Քվեաթերթիկի տիպային ձևը սահմանվում է Խորհրդի կանոնակարգով:

7.20. Խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ կանոնադրությամբ կամ Ընդհանուր ժողովի կողմից հաստատած խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Չայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Չայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

7.21. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Ընկերության գլխավոր տնօրենի մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության գլխավոր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Ընկերության գլխավոր տնօրենը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

7.22. Ընկերության խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից: Ընկերության խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում, ղեկավարում և վերահսկում է Խորհրդի աշխատանքները,

- բ) գումարում և նախագահում է Խորհրդի նիստերը,
- գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը,
- դ) նախագահում է Ընկերության Ընդհանուր ժողովում,
- ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը,
- զ) Ընկերության անունից կնքում է աշխատանքային պայմանագրեր՝ Ընկերության վարչության անդամների և ներքին աուդիտորի հետ,
- է) իրականացնում է Ընկերության խորհրդի կանոնակարգով իրեն վերապահված այլ գործառնությունները:

7.23. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

7.24. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝

- ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել Ընկերության խորհրդի անդամ (Ընկերության ղեկավար),
- գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից՝ անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից: Սույն կետի իմաստով իրական ժամանակի ռեժիմով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն,
- դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ գրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

7.25. Ընկերության վարչությունը և գլխավոր տնօրենը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմինների՝ Ընկերության միանձնյա գործադիր մարմնի՝ գլխավոր տնօրենի և Ընկերության կոլեգիալ գործադիր մարմնի՝ վարչության կողմից:

Ընկերության միանձնյա և կոլեգիալ գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ:

Ընկերության գործադիր մարմինների իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերից:

Գլխավոր տնօրենի և վարչության անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության գործադիր մարմինների կանոնակարգով և Ընկերության ու նրանցից յուրաքանչյուրի հետ կնքված պայմանագրով:

Ընկերության գործադիր մարմինները կազմակերպում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

7.26. Ընկերության գլխավոր տնօրենը՝

- 1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից,
- 2) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- 3) գործում է առանց լիազորագրի,
- 4) տալիս է լիազորագրեր,
- 5) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- 6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ,
- 7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, ընդունում է որոշումներ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց

կատարումը,

8) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

9) Վարչության քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառվող խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ և վարչության որոշման հիման վրա կիրառում է այդ միջոցները,

10) ղեկավարում է Վարչության աշխատանքը:

7.27. Գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են Ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի (որոնց) արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ Ընկերության կանոնադրական կապիտալի մինչև 5 տոկոսը, կատարվում է Ընկերության գլխավոր տնօրենի որոշմամբ:

7.28. Ընկերության վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ընկերության գործադիր մարմինների կանոնակարգի հիման վրա, որոնք սահմանում են նաև վարչության նիստերի հրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

7.29. Վարչության նիստերն արձանագրվում են: Վարչության նիստերի արձանագրությունները ներկայացվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին, Խորհրդին, ներքին աուդիտորին, ՀՀ կենտրոնական բանկին և Ընկերության աուդիտն իրականացնող անձին՝ վերջիններիս պահանջով:

Ընկերության վարչությունը ներառում է Ընկերության գլխավոր տնօրենին, նրա տեղակալին (տեղակալներին), գլխավոր հաշվապահին: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ վարչության կազմում կարող են ընդգրկվել նաև Ընկերությունում այլ պաշտոններ զբաղեցնող անձինք:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Ընկերության գլխավոր տնօրենը, որն ստորագրում է նիստի որոշումները և արձանագրությունը: Ընկերության գլխավոր տնօրենը պատասխանատվություն է կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության:

Վարչության նիստերը իրավագոր են, եթե նիստին ներկա են Վարչության անդամների կեսից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Ձայների հավասարության դեպքում գործադիր տնօրենի ձայնը վճռորոշ է:

Ընկերության վարչությունն իրավասու է՝

1) Ընկերության խորհրդի հաստատմանը ներկայացնել Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, աշխատատեղերը, Ընկերության աշխատակիցների աշխատավարձի դրույքաչափերը, առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները,

2) Ընկերության Խորհրդի համաձայնեցմանը և Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել Ընկերության ներքին իրավական ակտերի նախագծերը,

3) որոշումներ ընդունել Ընկերության կողմից իրականացվող ակտիվային և պասիվային գործարքների կատարման, դրանց պայմանների սահմանման և սպասարկման վերաբերյալ,

4) քննարկել ստուգումների նյութերը և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,

5) որոշումներ ընդունել հերթական և արտահերթ Ընդհանուր ժողովների գումարման մասին, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

6) որոշումներ ընդունել Ընկերության աշխատակիցների (բացառությամբ վարչության անդամների և ներքին աուդիտորի) նկատմամբ խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ,

7) որոշումներ ընդունել Օրենքով նախատեսված և Վարչության իրավասությանը

ենթակա այլ հարցերի վերաբերյալ

8) որոշումներ ընդունել Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված և Վարչության իրավասությանը ենթակա այլ հարցերի վերաբերյալ:

7.30. Գործարքը կամ մի քանի փոխկապակցված գործարքները, որոնք կապված են ընկերության կողմից ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ, որի/որոնց արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 5-ից մինչև 20 տոկոսը կատարվում է Ընկերության գլխավոր տնօրենի կողմից՝ Ընկերության վարչության որոշմամբ:

7.31. Գործարքները, որոնց կատարման մեջ առկա է Ընկերության խորհրդի անդամի, Ընկերության գործադիր մարմնի գործառույթները կատարող անձի շահագրգռվածությունը կամ Ընկերության մասնակցի շահագրգռվածությունը, և որոնք ունեն Ընկերության մասնակցների ընդհանուր ձայների թվի քսան և ավելի տոկոսը, կարող են կատարվել միայն Ընդհանուր ժողովի համաձայնության:

7.32. Ընկերության կառավարման մարմինների անդամների պատասխանատվությունը:

Ընկերության խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը և վարչության անդամները իրենց պարտականությունների կատարման ընթացքում պետք է գործեն՝ ելնելով Ընկերության շահերից, իրականացնեն իրենց իրավունքները և Ընկերության նկատմամբ իրենց պարտականությունները կատարեն բարեխիղճ ու ողջամիտ կերպով:

Ընկերության խորհրդի անդամները, գլխավոր տնօրենը և վարչության անդամները Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են կառավարման մարմնի այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

Ընկերության խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և վարչության անդամների հրաժարականը, պաշտոնից հետ կանչելը կամ ազատելը չի ազատում նրանց՝ Ընկերությանը պատճառած վնասի համար պատասխանատվությունից:

Ընկերության խորհրդի անդամների, գլխավոր տնօրենի և վարչության անդամների պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները:

Եթե սույն կետի դրույթներին համապատասխան Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվություն է կրում մի քանի անձ, ապա նրանք Ընկերության առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն հոդվածով սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

(ԳԼՈՒԽ 7. փոփոխ. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԸ

8.1. Ընկերությունն ունի ներքին աուդիտոր, որը գործում է համաձայն սույն կանոնադրության և Ընկերության խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի:

8.2. Ներքին աուդիտորը նշանակվում է Ընկերության խորհրդի կողմից: Ներքին աուդիտոր չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

8.3. Ներքին աուդիտորը պարտավոր է պահպանել Ընկերության աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

8.4. Ընկերության ներքին աուդիտորը Ընկերության խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և գործառ-

նական ռիսկերի նկատմամբ,

բ) հսկողություն է իրականացնում Ընկերության գլխավոր տնօրենի (վարչության), տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին ակտերի, գլխավոր տնօրենին (վարչությանը) տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,

գ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Ընկերության խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտորի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

8.5. Ներքին աուդիտորը խորհրդին, վարչությանն ու գլխավոր տնօրենին է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին,

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են գլխավոր տնօրենի (վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտորն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել Ընկերության խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումներ:

(ԳԼՈՒԽ 8. ավելաց. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԸ

9.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտն իրականացնող անձի՝ աուդիտորի, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա մասնակիցների հետ, կնքելով նրանց հետ համապատասխան պայմանագիր:

9.2. Աուդիտորի ընտրությունը կատարվում է համաձայն ՀՀ օրենսդրության: Ընկերության աուդիտն իրականացնող անձը հաստատվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Ընկերության խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարվող գումարի չափը:

(ԳԼՈՒԽ 9. վերնագրի փոփոխ., խմբ. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10.1. Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են Ընկերության ֆինանսական, վիճակագրական, հարկային հաշվետվություններում, Ընկերության կողմից սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում, ինչպես նաև Ընկերության մասնակիցների կողմից սահմանված հաշվետվություններում:

10.2. Հաշվառումն Ընկերությունում իրականացվում է ՀՀ Կենտրոնական բանկի և կառավարության լիազորած մարմնի հետ համաձայնեցված կարգով՝ հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան:

10.3. Ընկերությունը կազմում և օրենքով սահմանված ժամկետներում մամուլում հրատարակում է տարեկան և եռամսյակային ֆինանսական, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ հաշվետվություններ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված ձևերով:

10.4. Ընկերության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

10.5. Ընկերության հաշվառման և հաշվետվական համակարգը կազմակերպում և իրականացնում է Ընկերության գլխավոր հաշվապահը: Գլխավոր հաշվապահի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, սույն կանոնադրությամբ, Ընկերության ներքին իրավական ակտերով և Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով: Գլխավոր հաշվապահը կազմում է ղեկավարությանը և երրորդ անձանց ներկայացվող ֆինանսական, վիճակագրական և հարկային հաշվետվությունները և պատասխանատու է դրանց համար:

10.6. Գլխավոր հաշվապահը կազմակերպում և սպասարկում է Ընկերության ընթացիկ գործունեության հաշվապահական և հաշվետվական համակարգերը: Նա հաշվետու և ենթակա է անմիջականորեն գլխավոր տնօրենին:

10.7. Ընկերության գլխավոր հաշվապահը՝

- 1) կազմակերպում և վարում է Ընկերության հաշվապահական հաշվառումը,
 - 2) կազմում և ներկայացնում է ՀՀ կենտրոնական բանկին, հարկային և սոցիալական ապահովագրության մարմիններին ներկայացվող հաշվետվությունները,
 - 3) կազմում է Ընկերության ընդհանուր ժողովին, խորհրդին, վարչությանը ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները,
 - 4) իրականացնում է Ընկերության գործունեության հաշվապահական վերահսկողությունը,
 - 5) իրականացնում է բյուջեի կատարման վերահսկողությունը և հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդին, Գլխավոր տնօրենին և Վարչությանը,
 - 6) իրականացնում է սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառույթներ:
- 10.8. Գլխավոր հաշվապահը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասների համար:

(ԳԼՈՒԽ 10. վերնագրի փոփոխ., խմբ. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11.1. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս կարող է ունենալ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

11.2. Հայաստանի Հանրապետության տարածքում մասնաճյուղերը և ներկայացուցչությունները ստեղծվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, իսկ արտասահմանում՝ տվյալ պետության և ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

(ԳԼՈՒԽ 11. վերնագրի փոփոխ., խմբ. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 12. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

12.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը, ինչպես նաև Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը իրականացվում է մասնակիցների Ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է մասնակիցների ընդհանուր թվի ձայների 2/3-ով:

12.2. Ընկերության կանոնադրությունում կատարված փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև Ընկերության նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը իրավաբանական ուժ են ձեռք բերում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կենտրոնական բանկում գրանցման պահից:

(ԳԼՈՒԽ 12. վերնագրի փոփոխ. 10.06.2010թ)

ԳԼՈՒԽ 13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել Ընդհանուր ժողովի որոշմամբ:

13.2. Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

13.3. Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

13.4. Ընկերության լուծարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններով:

(ԳԼՈՒԽ 13. վերնագրի փոփոխ. 10.06.2010թ)